Շ. Լ. ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԳԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

1940—50-ական թվականներին արևմտյան երկրների մերձավորարևելյան քաղաքականության հիմնական նպատակներից մեկը իրենց գլխավորությամբ ռազմաքաղաքական ագրեսիվ խմբավորումներ ստեղծելն էր, որոնք ուղղված կլինեին ռեգիոնում օրըստօրե ավելի լայն թափով ծավալվող ազգային-ազատագրական շարժման և ՍՍՀՄ-ի ու սոցիալիստական մյուս երկրների դեմ։ Այդ թվականներին առաջ քաշվեցին այդպիսի խմբավորումներ ստեղծելու մի քանի ծրագրեր։ Այդ ծրագրերի առաջացմանը, դրանց դեմ արաբական ժողովուրդների մղած պայքարին անդրադարձել են սովետական մի շարք հետազոտողներ[1]։ Նրանցից ոմանք, այս կամ այն չափով, շոշափել են նաև այդ խմբավորումների ստեղծման խնդրում Արաբական լիգայի ունեցած դիրքորոշման հարցը։ Սակայն արաբական անկախ երկրները միավորող ռեգիոնալ այդ կազմակերպության դիրքորոշումը խնդրո առարկա հարցում առայժմ չի ստացել ամբողջական լուսաբանում թե՛ մեզանում, թե՛ արտասահմանում։ Ասվածը առավելապես ճիշտ է 1940-ական թվականներին առաջ քաշված ծրագրերի կապակցությամբ, քանի որ այս ասպարեզում Լիգայի 50-ական թվականների գործունեությունն անհամեմատ ավելի լավ է լուսաբանված։

Դեռ 1942—1945 թթ., երբ արաբական երկրների միջև բանակցություններ էին վարվում արաբական երկրների մի միավորում ստեղծելու հարցի շուրջ, անգլիական ղեկավար շրջաններում մտածում էին ստեղծվելիք կազմակերպությունը իրենց ձեռքին հլու գործիք դարձնելու և այն իրենց նպատակների իրականացմանը ծառայեցնելու մասին։ Սակայն Արաբական լիգայի ծրագրային առաջին փաստաթղթերը՝ Ալեքսանդրիայի Արձանագրությունը (1944թ. հոկտեմբեր) և Արաբական երկրների լի-

գայի պակտը (1945 թ. մարտ), ցույց տվեցին, որ Անգլիայի ակնկալիքներն իրական չեն։ Լոնդոնում, մանավանդ, շատ դժգոհ էին այդ փաստաթղթերում պաղեստինյան և գաղութային լծի տակ գտնվող մյուս արաբական երկրների հարցերի արծարծումից։ Արաբական լիգայի գործունեությունում նշմարվող այս անկախական միտումները վերացնելու համար Անգլիան դիմեց ակտիվ քայլերի։ Նախ լիգայի վրա ուժեղ ճնշում բանեցվեց, ձգտելով առժամանակ նրա գործունեությունը սահմանափակել երկրորդական նշանակություն ունեցող հարցերով։ Միաժամանակ Անդրհորդանանի ղեկավար գործիչները 1945 թ. աշնանից սկսեցին հարձակումներ գործել լիգայի վրա, խոսել նրա գործուն ուժ չունենալու մասին[2], նորից առաջ քաշելով արաբական ավելի սերտ միության իրականացման գաղափարը, որի ստեղծման գործում առաջին քայլը կլիներ անդրհորդանանյան էմիր Աբդալլահի գլխավորությամբ «Մեծ Սիրիայի» պետության ստեղծումը, որում ընդգրկվելու էին Սիրիան, Լիբանանը, Անդրհորդանանը և Պաղեստինը (կամ նրա մի մասը*)։ Սկսեց պրոպագանդվել նաև Արաբական լիգան ի հաշիվ Պարսից ծոցի անգլիական լծի տակ գտնվող արաբական իշխանապետությունների ընդարձակելու ծրագիրը[3]։ Իսկ անգլիամետ իրաքյան գործիչները 1945 թ. սեպտեմբերից սկսեցին հանդես գալ Թուրքիան Արաբական լիգայի կազմում ընդգրկելու առաջարկով, ինչը, ըստ «Արևի», «կը համապատասխանե դիտավորությանը բրիտանական դաշնակցին»[4]։ Տարաբնույթ, բայց այս կամ այն չափով անպայմանորեն լիգային առնչվող այս ծրագրերի իրականացումը զգալիորեն կդյուրացներ Մերձավոր արևելքում «Արևելյան բլոկ» անունով ռազմաքաղաքական խմբավորման ստեղծումը, որում նախատեսվում էր անդամագրել Արաբական լիգայի և Սաադաբադի պակտի անդամ երկրներին (Իրան, Աֆղանստան, Թուրքիա)։ Այդ ծրագրերը միաժամանակ կոչված էին թուլացնել լիգայի հակաիմպերիալիստական պոտենցիալը, մի դեպքում լիգայի անդամ երկրների շարքում վերախմբավորում կատարելու («Մեծ Սիրիայի» ծրագիրը), մյուսում՝ լիգան արևմտամետ երկրների հաշվին ընդարձակելու միջոցով։ Իսկ «Արևելյան բլոկի» ստեղծումը հետագայում կարող էր հանգեցնել Արաբական լիգայի՝ որպես անկախ կազմակերպության տարրալուծմանը այդ խմբավորման շրջանակներում։

---

* Հավանաբար անգլիական քաղաքագետները, ոչ առանց հիմքի, կարծում էին որ Սիրիայի և Լիբանանի հանրապետությունները հաշիվ «Մեծ Սիրիայի» միացյալ պետությունում ընդգրկելուց հետո լիգայի հակաիմպերիալիստական պոտենցիալին վճռական հարված կհասցվի։

Արաբական լիգային, սակայն, միայն «Արևելյան բլոկի» գումարելիներից մեկը լինելու դերը չէ, որ հատկացված էր։ Այդ խմբավորման փորձերին անդրադարձած հեղինակների կողմից չի արձանագրված, որ անգլիական գործիչները արաբական երկրներում այդ ծրագրի ընդունումը հեշտացնելու նպատակով ձգտում էին անպայման ապահովել դրա նկատմամբ Արաբական լիգայի խորհրդի դրական վերաբերմունքը։ Ըստ երևույթին Լոնդոնում կարծում էին, որ այս դեպքում գործին կօժանդակի նաև Լիգայի անդամներ Իրաքի և Անդրհորդանանի դիրքորոշումը։ 1945 թ. աշնանը, Արաբական լիգայի խորհրդի աշնանային նստաշրջանում իրաքյան պատվիրակության անդամ, Իրաքի նախկին վարչապետ Նուրի Սաիդն առաջարկեց քննարկել «Արևելյան բլոկի» ստեղծման հարցը[5]։ Արաբական լիգայի խորհրդի նստաշրջանի աշխատանքը լուսաբանող ոչ մի պաշտոնական հաղորդագրությունում այս մասին ոչ մի բան չնշվեց։ Արաբական լիգան հանդես չեկավ «Արևելյան բլոկի» նախագծի դատապարտմամբ։ Սակայն անկասկած է, որ Խորհրդի անդամների մեծամասնությունը խուսափողական կեցվածք որդեգրեցին դրա նկատմամբ։ Լիգայի այսպիսի դիրքորոշումն էլ, սակայն, պետք է համարել մեկը այն կարևոր գործոններից, որոնք վերջիվերջո հանգեցրեցին ռեգիոնի ազգային-ազատագրական շարժման և Սովետական Միության դեմ ուղղված այդ ագրեսիվ խմբավորումն ստեղծելու ծրագրի ձախողմանը։ Նույնիսկ այդ ժամանակվա պահպանողական վարչակարգեր ունեցող արաբական երկրների մեծամասնությունը գիտակցում էր Սովետական Միության դեմ ուղղված որևէ խմբավորումում մասնակցելու անհրաժեշտության մասին արևմտյան երկրների կողմից բերվող փաստարկների սնանկությունը։ Այս կապակցությամբ հատկանշական է Արաբական լիգայի գլխավոր քարտուղար Ազզամի 1945 թ. դեկտեմբերին կատարած հայտարարությունը, որում նշվում էր. «Լիգան, որպես արաբական երկրների ժողովրդական լայն զանգվածների շահերն արտահայտող օրգան, տարաձայնություններ չունի Ռուսաստանի հետ, և դրա համար էլ ոչ մի հիմք չկա, որ նա շահագրգռված լինի մասնակցելու որևէ հակասովետական խմբավորումում։ Ընդհակառակը՝ Ռուսաստանի ազգային քաղաքականության հիմնադրույթները և նրա ընդհանուր դեմոկրատական ուղղվածությունը անչափ գնահատվում են Լիգայի և արաբական աշխարհի դեմոկրատական տարրերի կողմից»[6]։

«Արևելյան բլոկի» ստեղծման հարցում շահախնդիր էր նաև Թուրքիան։ Դեռ Արաբական լիգայի ստեղծման շրջանում Անկարայում բացասաբար էին վերաբերում այդ կազմակերպությանը, քանի որ այն

«կարող էր ուժեղ արգելք հանդիսանալ Արաբական արևելքի պետությունների նկատմամբ թուրքական նախագծերի իրականացման համար»[7]։ Իսկ նոր խմբավորումում հնարավոր կլիներ տարրալուծել Արաբական լիգան և դրանով իսկ հեշտացնել Անկարայի ծավալապաշտական ծրագրերի իրականացումը, որոնց մեջ մտնում էր նաև Կիրենաիկայի բռնակցումը Թուրքիային և որին ի սկզբանե հակադրվում էր Արաբական լիգան[8]։

«Արևելյան բլոկ» ռազմաքաղաքական խմբավորում ստեղծելու գաղափարը Արաբական լիգայի Խորհրդի կողմից մերժվելուց հետո կարծեք թե մոռացության մատնվեց։ 1945 թ. վերջին և 1946 թ. առաջին կեսին Եգիպտոսում նոր թափով պայքար ծավալվեց երկրից անգլիական զորքերը դուրս բերելու համար։ Այս իրավիճակում Անգլիայի մերձավորարևելյան քաղաքականության ուշադրությունը կենտրոնացվեց եգիպտական հարցի վրա։ Արդեն 1946 թ. սկզբին Լոնդոնն առաջարկեց անգլո-եգիպտական հակամարտությունը լուծել «համատեղ պաշտպանության» պայմանագիր կնքելու միջոցով, որը «կնշանակեր անգլիական օկուպացիայի պահպանում...»[9]։ Սակայն 1946 թ. հոկտեմբերին այդ ոգով կնքված Սիդկի-Բևին պայմանագիրը* եգիպտական պառլամենտի կողմից չհաստատվեց և մերժվեց։ Այս պայմաններում, ինչպես նշվում է Լիբանանի կոմկուսի երկրորդ համագումարին տրված կենտկոմի հաշվետվությունում, անգլիական քաղաքականությունը «նորից ուղղվեց «Արևելյան բլոկ» և «Մեծ Սիրիա» ծրագրերին»[10]։ 1947 թ. հունվարին և ապրիլին, ի լրումն 1946 թ. մարտին ստորագրված թուրք-իրաքյան «բարեկամության և միության» պայմանագրի, կնքվեցին թուրք-անդրհորդանանյան և իրաք-անդրհորդանանյան համանման պայմանագրեր։ Այս պայմանագրերով, ինչպես նշում է Ա. Ֆ. Ֆեդչենկոն, ստեղծվեց Բաղդադ-Անկարա-Ամման եռանկյունին, որը կոչված էր լինելու «Արևելյան բլոկի» հիմքը[11]։ Միաժամանակ իրաք-անդրհորդանանյան պայմանագիրը «յուրօրինակ փորձ էր.... հետին մուտքից իրագործել «Մեծ Սիրիայի» և «Բարեբեր մահիկի» երկրների ֆեդերացիայի** ստեղծման նախագիծը», ուժեղացնել այդ պայմանագիրը կնքած երկրների դիրքերն Արաբական լիգայում, «խորացնել դեռ 1945 թ. նկատվող լիգայի պառակտումը և դրանով իսկ թուլացնել այդ ռեգիոնալ

---

* Պայմանագիրն այդպես էր կոչվում այն կնքած Եգիպտոսի վարչապետ Սիդկիի և Անգլիայի արտաքին գործերի մինիստր Բևինի անուններով։

** «Մեծ Սիրիայի» և Իրաքի միավորումը ֆեդերալ պետության մեջ։

կազմակերպության հակաիմպերիալիստական գործունեությունը»[12]։ Անգլիան և նրա կամակատարները տեսնելով, որ իրաքա-անդրհորդանանյան ստեղծվելիք միությանը միանալու մյուս արաբական երկրներին ուղղված կոչերը մնում են անպատասխան, սկսեցին առաջնահերթ ուշադրություն դարձնել «Մեծ Սիրիայի» ծրագրին, գտնելով, որ առավել իրական հիմքեր կան հենց դրա իրականացման համար և որ դրա իրագործումը թույլ կտա նաև ամենակարճ ժամանակահատվածում ստեղծել «Արևելյան բլոկ» խմբավորումը։ 1946 թ. նոյեմբերի երկրորդ կեսից անդրհորդանանյան գործիչները լայն պրոպագանդիստական արշավանք սկսեցին ծավալել «Մեծ Սիրիայի» ծրագրի օգտին, որը շատ վատ ընկալվեց Դամասկոսում և Բեյրութում[13]։ Հարցն այն աստիճան սրվեց, որ քննարկման առարկա դարձավ Արաբական լիգայում։ Այդ առթիվ հրապարակված հայտարարություններում նշվում էր, որ արաբական երկրները նպատակադրված չեն «խախտել Արաբական լիգայի անդամ որևէ երկրի անկախությունն ու սուվերենությունը, կամ միջամտել նրա կառավարման ձևի հարցին»։ Միաժամանակ մի անգամ ևս հավաստվում էր արաբական պետությունների հավատարիմ լինելը Լիգայի պակտին[14]։ Այսպիսով, ճիշտ է շատ դիվանագիտորեն, Արաբական լիգան հանդես եկավ «Մեծ Սիրիայի» ծրագրի դատապարտմամբ։ 1946 թ. նոյեմբեր 28 թվակիր այս հայտարարությունը ստորագրել էր նաև Անդրհորդանանի արտաքին գործերի մինիստր Մուհամեդ աշ-Շուրայքին։ Մի քանի օր անց, սակայն, նույն աշ-Շուրայքին իր կառավարության անունից մի հուշագիր ներկայացրեց Արաբական լիգայի խորհրդի նախագահին, որում հայտնվում էր Անդրհորդանանի մտադրությունը «Մեծ Սիրիայի» ծրագրի իրականացման փորձերը շարունակելու մասին[15]։ Փաստորեն ամբողջ 1947 թ. ընթացքում Ամմանի արաբական քաղաքականության հիմքում շարունակվում էր դրված մնալ «Մեծ Սիրիայի» ծրագիրը։ 1947 թ. փետրվարին Արաբական լիգայի քարտուղարությունը, ելնելով ընդհանուր շահերից, պահանջեց «դադարեցնել այդ հարցի բարձրացումը»[16]։ Ավելի ուշ այդ ծրագրի դատապարտմամբ հանդես եկան սաուդական և եգիպտական կառավարությունները[17]։ Քննարկվում էր նույնիսկ Անդրհորդանանի՝ Լիգայից վռնդելու հարցը[18]։ Այս պայմաններում Անդրհորդանանի էմիր Աբդալլահը հայտարարեց, որ նա ժամանակավորապես հրաժարվում է «Մեծ Սիրիայի» ստեղծման առաջարկից, Պաղեստինի խնդրում արաբական միասնական դիրքորոշում որդեգրելու անհրաժեշտությունից ելնելով ինչպես նշում է Լ. Ն. Կոտլովը, «այսպիսով

փաստորեն»... Աբդալլահի թագի ներքո Լևանտի երկրները միավորելու ծրագրին վերջ տրվեց[19]։

«Արևելյան բլոկ» և «Մեծ Սիրիա» իմպերիալիստական ծրագրերի ձախողման գործում Արաբական լիգան որոշակի դեր կատարեց։ Այդ կազմակերպությունը բացասական դիրքորոշում որդեգրեց երկու նախագծերի նկատմամբ։ Ճիշտ է, այն զգուշավոր և պետք եղածից շատ դիվանագիտական երանգ ուներ, բայց այնուամենայնիվ բացասական էր։ Արաբական լիգայի շրջանակներում փաստորեն ստեղծվեց այդ ծրագրերին ընդդիմացող արաբական երկրների մի ճակատ, որին անդամակցում էին Սիրիան, Լիբանանը, Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան, և որը հենվելով արաբական ժողովրդական լայն զանգվածների հակաիմպերիալիստական տրամադրությունների վրա կարողացավ պայքարել այդ նախագծերի դեմ։

Հաջողության չհասնելով «Արևելյան բլոկ» և «Մեծ Սիրիա» նախագծերի իրականացման գործում, Անգլիան 1947 թ. վերջին և 1948 թ. սկզբին նորից առաջին պլան մղեց «Համատեղ պաշտպանության» պայմանագրերի գաղափարը։ Ի տարբերություն 1946 թ., երբ փորձ արվեց այդպիսի պայմանագիր կնքել միայն Եգիպտոսի հետ, այս անգամ խնդիր էր դրվում նման պայմանագրեր ունենալ Արաբական արևելքի բոլոր երկրների հետ։ Ըստ այդ պայմանագրերի նախատեսվում էր ստեղծել համատեղ պաշտպանության խորհուրդներ, որոնցում ներկայացված էին լինելու անգլիական և տեղական սպաներ։ Պայմանագիր կնքած յուրաքանչյուր արաբական երկրի բանակը, ռազմածովային, ռազմաօդային խարիսխները, հաղորդակցությունների համալիրները և կարևոր արդյունաբերական հիմնարկները համատեղ պաշտպանության խորհրդի վերահսկողությանն էին ենթարկվելու։ Պատերազմական կամ պատերազմի վտանգի պայմաններում խորհուրդները իրավունք էին ունենալու անգլիական զորքեր հրավիրել։ Պատերազմի դեպքում ռազմական բոլոր խարիսխները անգլիական ռազմական հրամանատարությանն էին ենթարկվելու[20]։

1948 թ. հունվարի 15-ին Պորտսմուտում կնքված անգլո-իրաքյան և 1948 թ. մարտի 15-ին Ամմանում ստորագրված անգլո-անդրհորդանանյան պայմանագրերն արդեն համապատասխան դրույթներ էին պարունակում համատեղ պաշտպանության մարմիններ ստեղծելու վերաբերյալ[21]։ Սակայն այս պայմանագրի կնքումը նշանավորում էր միայն «համատեղ պաշտպանության» պայմանագրերի միջոցով իր գլխավորությամբ Արաբական արևելքում ռազմաքաղաքական խմբավորում ստեղ-

ծելու Լոնդոնի քաղաքականության առաջին փուլը։ Երկրորդ փուլում ենթադրվում էր կա՛մ համանման պայմանագրեր կնքել Լիգայի անդամ մնացած երկրների հետ[22], կա՛մ Արաբական լիգայի ու Անգլիայի միջև ստորագրել մի պայմանագիր, որ «կփոխարիներ Անգլիայի ու Արաբական լիգայի անդամ երկրներ՝ Իրաքի, Եգիպտոսի և Անդրհորդանանի միջև գոյություն ունեցող, ինչպես նաև Լիգայի անդամ Սաուդյան Արաբիայի և Եմենի հետ ապագայում կնքվելիք պայմանագրերին»[23]։ Անգլիական գործիչները կարծում էին, որ այս անգամ գործի հաջողությանը կնպաստի նաև այն բարդ վիճակը, որ իրենց և ամերիկյան իմպերիալիստների վարած քաղաքականության պատճառով ստեղծվել էր Արաբական արևելքում պաղեստինյան հարցի ծայրահեղ սրման կապակցությամբ։ Լոնդոնի դիտավորությամբ, արաբական երկրները, գիտակցելով իրենց վատ զինված լինելը և Պաղեստինում սիոնիստական կազմակերպությունների ծավալապաշտական նկրտումները, ուղղակի ստիպված կլինեին նման պայմանագրեր ստորագրել։ Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ հենց 1948 թ. ապրիլին՝ արաբա-իսրայելական պատերազմի նախօրյակին, Լիբանանի վարչապետ Ռիադ Սոլհը Արաբական լիգայի քաղաքական կոմիտեում բարձրացրեց Արաբական լիգայի անդամ երկրների և Անգլիայի միջև ռազմական պայմանագրեր կնքելու հարցը[24]։ Սակայն այս անգամ ևս Լոնդոնի հաշիվները սխալ դուրս եկան։ Արաբական լիգայի քաղաքական կոմիտեն ընդառաջ չգնաց անգլիական առաջարկին և այն անարձագանք թողեց։ Այսպիսով, այս անգամ ևս անգլիական քաղաքականությունը անհաջողություն կրեց։

Պետք է նշել, որ 40-ական թվականներին առաջ քաշված վերոհիշյալ ոչ բոլոր ծրագրերն էին հավանության արժանանում արևմտյան բոլոր երկրների կողմից։ Օրինակ «Մեծ Սիրիայի» ծրագրի նկատմամբ բացասական դիրքորոշում ունեին ԱՄՆ-ը և Ֆրանսիան[25]։ Փարիզը դեմ էր նաև որևէ արաբական երկրի, բացի Իրաքից, և Սաադաբադի պակտի անդամ տերությունների միջև ռազմական պայմանագրի կնքմանը[26]։ Սակայն 50-ական թվականներից արևմտյան երկրների մերձավորարևելյան քաղաքականությունը դառնում է ավելի կոորդինացված։ Դրա վկայությունն է նաև 1950 թ. մայիսի 25-ի անգլո-ֆրանս-ամերիկյան հայտարարությունը Մերձավոր արևելքի վերաբերյալ։ Այդ փաստաթղթում երեք տերությունները հայտնում էին իրենց պատրաստակամության մասին՝ զենք և զինամթերք մատակարարել արաբական երկրներին և Իսրայելին, պայմանով, որ այդ երկրները դրանք չեն օգտագործի միմյանց դեմ։ Արևմտյան երկրները իրենց իրավունք էին վերապահում

միջամտել ռեգիոնի գործերին, ընդ որում, ինչպես շեշտվում է հայտարարությունում, նույնիսկ «Միավորված Ազգերի շրջանակներից դուրս»[27]։ Սովետական կառավարության կարծիքով այդ հայտարարությունը ցույց էր տալիս, որ իմպերիալիստները «մերձավորարևելյան երկրները դիտում են նախևառաջ որպես իրենց ռազմական ծրագրերի իրականացման գործիք»[28]։

1948 թ. արաբա-իսրայելական պատերազմում պարտություն կրելուց հետո արաբական երկրներն իրոք զգում էին զենքի և զինամթերքի պակաս՝ դիմագրավելու համար իր ստեղծման օրվանից ծավալապաշտական քաղաքականություն վարող Իսրայելին։ Սակայն, ինչպես երևում է վերոհիշյալ հայտարարությունից, արևմտյան երկրները բացառում էին արաբական երկրների կողմից իրենց մատակարարած զենքի օգտագործումը Իսրայելի դեմ։ Նրանք մտահոգված էին ոչ թե արաբական երկրների պաշտպանունակության հարցով, այլ նպատակ ունեին զենքի մատակարարման միջոցով ուժեղացնել մերձավորարևելյան երկրների կախյալ վիճակը իրենցից, ինչպես նաև, լիբանանյան կոմունիստների որակումով, ռեգիոնը դարձնել «Սովետական Միության դեմ հարձակվելու խարիսխ... և զինել արաբական հետադիմական վարչակարգերը՝ կանգնեցնելու համար արաբական ժողովրդական շարժումները»[29]։

1950 թ. հունիսին անգլո-ֆրանս-ամերիկյան հայտարարությունը քննարկվեց Արաբական լիգայի խորհրդում։ Հունիսի 21-ին երեք երկրների կառավարություններին ուղարկվեց Արաբական լիգայի պատասխանը։ 9 կետից բաղկացած այդ փաստաթղթից դժվար է միանշանակ պատկերացում կազմել «եռյակ հայտարարության» նկատմամբ Լիգայի ունեցած դիրքորոշման մասին։ Պատահական չէ, որ այդ փաստաթղթին տրվել են իրարամերժ գնահատականներ։ Իրոք, Արաբական լիգայի պատասխանում չի մերկացվում անգլո-ֆրանս-ամերիկյան հայտարարության բուն էությունը, բացահայտորեն չի դատապարտվում արևմտյան երկրների դիտավորությունը միջամտել ռեգիոնի անցուդարձերին, կարծեք լռելյայն ընդունվում է իմպերիալիստների պայմանը՝ ըստացվելիք զենքն ու զինամթերքը չօգտագործելու Իսրայելի դեմ[30]։ Հենց այսպիսի հաշտվողական կեցվածքի համար էլ Լիգայի պատասխանը լիբանանյան կոմունիստների կողմից գնահատվել է որպես «կապիտուլյանտական»[31]։ Սովետական հետազոտողներ Բ. Գ. Սեյրանյանը, Օ. Է. Տուգանովան, ինչպես նաև արաբ պատմաբան Ա. Սաիդը (ըստ Բ. Գ. Սեյրանյանի հղման) գտնում են, որ Արաբական լիգան «եռյակ հայտարարության» նկատմամբ բացասական դիրքորոշում ընդունեց։

Նրանք իրենց կարծիքը հիմնավորում են հենվելով Լիգայի պատասխանի 9-րդ կետի վրա, որում նշվում է, որ արաբական երկրները «... հավանություն չեն տա որևէ գործողության, որ կվնասի իրենց անկախությանն ու սուվերենությանը»[32]։ Մեր կարծիքով այս հարցում Արաբական լիգայի դիրքորոշումը գնահատելիս, եթե նկատի առնվի Լիգայի պատասխանը միայն, ավելի ճիշտ կլինի համակարծիք լինել արաբ կոմունիստներին։ Սակայն հարցի այդպիսի դրվածքը թերի կլինի, քանի որ Արաբական լիգայի պատասխանը միակ քայլը չէր, որ ձեռնարկվեց միջարաբական այդ կազմակերպության կողմից՝ Արաբական արևելքում իմպերիալիստական ոտնձգությունների դեմ պայքարելու համար ընդհանրապես, և «եռյակ հայտարարության» դեմ՝ մասնավորապես։ Այս առումով միանգամայն իրավացի են Յու. Վ. Մարունովն ու Յու. Վ. Պոտյոմկինը, Բ. Մ. Փոցխվերիան և վերևում արդեն հիշված Օ. Է. Տուգանովան, որոնք Արաբական լիգայի անդամների միջև կնքված «Համատեղ պաշտպանության և տնտեսական համագործակցության» պայմանագիրը դիտում են որպես ռեգիոնում ռազմաքաղաքական խմբավորումներ ստեղծելու իմպերիալիստական ծրագրերի դեմ ուղղված քայլ[33]։ Արևմտյան հեղինակ Ռ. Մակդոնալդը Արաբական լիգային նվիրված իր մենագրությունում անդրադառնալով այդ պայմանագրին, նշում է, որ այն ստորագրվեց մի այնպիսի ժամանակ, երբ պայմանները դրա համար բոլորովին էլ բարենպաստ չէին, նրա կարծիքով այդ անբարենպաստ պայմաններից մեկն էլ արևմտյան երկրների էլ ավելի ուժեղացած ճնշումն էր արաբական որոշ երկրների վրա այսպես կոչված «սովետական վտանգի» դեմ ուղղված «պաշտպանական» խմբավորումում նրանց ընդգրկելու համար[34]։

«Համատեղ պաշտպանության» պայմանագրի առաջացման հանգամանքները, որոնք ցարդ այնքան էլ լուսաբանված չեն, մեզ կօգնեն է՛լ ավելի հիմնավորելու վերևում ասվածը։ 1948 թ. արաբա-իսրայելական պատերազմում արաբական երկրների կրած պարտությունը բավականին վատ անդրադարձավ Արաբական լիգայի գործունեության վրա։ Կարելի է ասել, որ 1948 թ. վերջին և 1949 թ. առաջին կեսին այդ կազմակերպությունը համարյա անգործության էր մատնված։ Սակայն այդ նույն շրջանում արաբական երկրներում առաջ էին քաշվում նախագծեր, որոնք կոչված էին դուրս բերել Լիգան ճգնաժամից, նրա անդամների միասնությունն է՛լ ավելի ամրապնդելու և օտարերկրյա ազդեցության ուժեղացումը վերացնելու ճանապարհով։ Այսպես օրինակ, 1949 թ. փետրվա-

րին Սիրիան և Լիբանանն առաջարկեցին արգելել Լիգայի անդամներին օտար երկրի հետ որևէ պայմանագիր կնքել առանց Լիգայի համաձայնության[35]։ Սրան հակառակ, անգլիամետ արաբական վարչակարգերը ներկայացրեցին Լիգայի բարեփոխման իրենց ծրագրերը։ Իրաքի վարչապետ Նուրի Սաիդի ներկայացրած նախագծում նախատեսվում էր ավելի շատ ազատություն տալ անդամ երկրներին, այդ թվում այլ երկրների հետ, Լիգայից անկախ ռազմական և առևտրական պայմանագրեր կընքելու ասպարեզում[36]։ Իսկ 1949 թ. օգոստոսին Հորդանանի թագավոր Աբդալլահը հանդես եկավ «Մահմեդական լիգա» ստեղծելու առաջարկով, որին կանդամակցեին Իրանն ու Պակիստանը, և որը «կաջակցեր Արաբական երկրների լիգային»[37]։ 1949 թ. հոկտեմբերին գումարված Արաբական լիգայի խորհրդի նստաշրջանը քննարկելով Լիգայի բարեփոխման բազմաթիվ առաջարկները վերջիվերջո նախապատվությունը տվեց Եգիպտոսի ներկայացրած արաբական կոլեկտիվ անվտանգության պայմանագիր կնքելու գաղափարին։ Որոշվեց մի հանձնախումբ կազմել, որը կմշակեր պայմանագրի տեքստը[38]։ 1950 թ. ապրիլին Արաբական լիգայի խորհուրդը հաստատեց այդ պայմանագիրը, որում լիբանանյան կառավարության առաջարկով տեղ հատկացվեց նաև միջարաբական տնտեսական համագործակցությանը։ Պայմանագիրը կոչված էր ուժեղացնելու արաբական երկրների համագործակցությունը ռազմական և տնտեսական հարցերում։ Նախատեսվում էր Լիգայի շրջանակում ստեղծել մի շարք նոր մարմիններ, որոնք լայն իրավասություններ էին ունենալու պաշտպանական և տնտեսական ասպարեզներում։ Պայմանագիրը կրում էր զուտ արաբական բնույթ, այն կոչված էր ծառայելու միայն արաբական երկրների պաշտպանությանը։ Անգլիան բացասական վերաբերմունք ունեցավ այդ պայմանագրի նկատմամբ, իսկ ԱՄՆ-ը ակտիվորեն սկզբից ևեթ աջակցում էր այդ պայմանագիրը ստորագրելու գաղափարին, նրանում տեսնելով իր գլխավորությամբ ապագայում ստեղծվելիք ռազմական խմբավորման սաղմը[39]։ Անգլիայի դրդմամբ Իրաքն ու Անդրհորդանանը հրաժարվեցին պայմանագիրն ստորագրելուց, պահանջելով որոշ փոփոխություններ մտցնել դրանում։ Լիգայի անդամ յոթ երկրներից երկուսի չմիանալը պայմանագրին զգալիորեն կթուլացներ դրա արդյունավետությունը և սկզբում Արաբական լիգայի անդամները կարծեք հակված չէին առանց Իրաքի և Անդրհորդանանի, մի տեսակ անջատ, ստորագրել այն։ Սակայն 1950 թ. հունիսի 17-ին, այն նույն օրը, երբ Լիգայի խորհուրդը հաստատեց «եռյակ հայտարարության»

պատասխանը*, Եգիպտոսը, Սիրիան, Լիբանանը, Սաուդյան Արաբիան և Եմենը ստորագրեցին «Համատեղ պաշտպանության և տնտեսական համագործակցության» պայմանագիրը։ Փաստորեն այդ քայլը կարելի է համարել «եռյակ հայտարարությանը» տրված Արաբական լիգայի պատասխանի 10-րդ կետը, որը, սակայն, միաձայնորեն չէր հաստատվել Լիգայի անդամների կողմից։ «Եռյակ հայտարարությունը» տվեց հակառակ արդյունք։ Սակայն հարց է առաջանում, թե ինչու՞ էր Արաբական լիգայի պատասխանը այնուամենայնիվ հաշտվողական։ Մեր կարծիքով այդ բանի հիմնական պատճառներից մեկն այն էր, որ «եռյակ հայտարարության» համահեղինակներից մեկը ԱՄՆ-ն էր։ Այդ ժամանակաշրջանում ամերիկյան դիվանագիտությունը հաճախ գաղտնի աջակցում էր արաբական այս կամ այն երկրին անգլո-ֆրանսիական իմպերիալիստների դեմ մղվող պայքարում՝ նպատակ ունենալով Լոնդոնի և Փարիզի ազդեցությունն Արաբական արևելքում փոխարինել ամերիկյանով։ Այսպես օրինակ՝ Վաշինգտոնը «գաղտնի խրախուսում էր եգիպտական կառավարության պահանջը Եգիպտոսից անգլիական զորքերի դուրս բերման վերաբերյալ»[40]։ Այս բոլորը թյուր պատկերացումներ էին առաջացրել արաբական երկրներում ԱՄՆ-ի քաղաքական գծի վերաբերյալ։ Եթե Արաբական լիգայի փաստաթղթերում շատ հաճախ անգլիական և ֆրանսիական իմպերիալիստները ամենասուր ձևով քննադատվում էին, ապա ԱՄՆ-ի հանդեպ նման բաներ չէին արվում։ Վաշինգտոնի հետ լավ հարաբերությունները չփչացնելու Լիգայի անհեռանկարային և սխալ միտումով էլ մասամբ պայմանավորված էր Լիգայի պատասխանի նման բնույթը։ Բացի այդ, հավանաբար, նշանակություն ուներ նաև ամեն գնով միասնական ձևով հանդես գալու Լիգայի ձգտումը։ Ավելի խիստ պատասխանի ընդունումը անպայմանորեն կհանդիպեր Իրաքի և Հորդանանի ընդդիմադրությանը, որը կդժվարացներ միասնական դիրքորոշման որդեգրումը։ Սակայն կրկնվելով պետք է նշել, որ Արաբական լիգայի պատասխանով չէ միայն որ պետք է դատել Լիգայի վերաբերմունքի մասին։ Վերջին հաշվով «Համատեղ պաշտպանության» պայմանագրի կնքումով Արաբական լիգան ցույց տվեց իր ընդդիմությունը արաբական երկրներն իմպերիալիստական ռազմաքաղաքական խմբավորումներում ընդգրկելուն։

Ինչպես 1940-ական, այնպես էլ 1950-ական թվականներին Մերձավոր արևելքում ռազմաքաղաքական խմբավորումների ստեղծման

* Արաբական լիգայի պատասխանը, ինչպես նշվեց վերևում, արևմտյան երկրներին ուղարկվեց հունիսի 21-ին, բայց Լիգայի խորհրդում հաստատվել էր հունիսի 17-ին։

հարցում անչափ շահագրգիռ դիրքորոշում էր դրսևորում Թուրքիան։ Իմպերիալիստական ծրագրերի իրականացման գործում Անկարան հաճախ կատարում էր մի տեսակ միջնորդի դեր։ 1950 թ. մարտին երբ ստորագրվեց իտալա-թուրքական պայմանագիրը, թուրքական ղեկավար շրջանները սկսեցին պրոպագանդել այդ պայմանագրին արաբական երկրների միանալու գաղափարը[41]։ Իսկ 1951 թ. հոկտեմբերի 13-ին թուրքական կառավարությունը ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի հետ միասին պաշտոնապես դիմեց Արաբական լիգայի անդամ երկրներին և Իսրայելին «Միջինարևելյան հրամանատարություն» անվանումով ռազմաքաղաքական խմբավորում ստեղծելու առաջարկով։ Նախատեսվում էր, որ մերձավորարևելյան երկրների հետ մեկտեղ այդ խմբավորման անդամներ կդառնան Ավստրալիան, Նոր Զելանդիան և Հարավ-Աֆրիկյան Միությունը։ Ենթադրվում էր նաև սերտ կապ հաստատել «միջինարևելյան հրամանատարության» և ՆԱՏՕ-ի միջև։ Բացի այդ «միջինարևելյան հրամանատարության» զորքերի անվան տակ ամերիկյան, անգլիական, ֆրանսիական և թուրքական զորամիավորումներ էին տեղադրվելու Արաբական արևելքի կարևոր շրջաններում։ Իմպերիալիստական այս գործարքի իրականացումը, ինչպես նշվում էր Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Սաուդյան Արաբիայի, Եմենի և Իսրայելի կառավարություններին հղված սովետական կառավարության հուշագրում, «կհանգեցներ Մերձավոր և Միջին արևելքի երկրների ռազմական օկուպացմանը Ատլանտյան բլոկի կազմակերպիչ երկրների զորքերի կողմից...»[42]։ Արևմտյան երկրները «այդ հրամանատարության ստեղծման անհրաժեշտությունը... փորձում էին հիմնավորել նրանով, որ իբր Մերձավոր և Միջին արևելքի երկրներին սպառնում էր Սովետական Միությունը»[43]։ Սակայն իրականում ռազմաքաղաքական այդ խմբավորումը կոչված էր ճնշել ռեգիոնի ազգային-ազատագրական շարժումը և ռազմական կարևոր խարիսխ դառնալ՝ ուղղված ՍՍՀՄ-ի դեմ[44]։ «Քառյակ հայտարարությունը» երևան եկավ մի այնպիսի ժամանակ, երբ ծայրահեղորեն սրվել էին անգլո-եգիպտական հարաբերությունները։ Եգիպտական կառավարությունն արդեն հրապարակայնորեն հայտարարել էր 1936 թ. անգլո-եգիպտական անիրավահավասար պայմանագիրը չեղյալ հայտարարելու իր մտադրության մասին։

«Միջինարևելյան հրամանատարության» վերաբերյալ իրենց առաջարկով իմպերիալիստական երկրները նպատակ ունեին նաև վիժեցնել եգիպտական կառավարության այդ միջոցառումը։ Դրա համար էլ այս ռազմական խմբավորման ստեղծելու հարցը, ինչպես նաև դրանից առաջ

և հետո եղած մի շարք այլ առաջարկներ, Արաբական լիգայի կողմից դիտվում էր արաբական երկրներին հուզող այլ հարցերի՝ մասնավորապես Եգիպտոսից անգլիական զորքերի դուրս բերման խնդրի հետ կապակցված։ Այս երկու խնդիրները իրարից չէին բաժանում նաև արևմտյան երկրները։ Պատահական չէ, որ անգլիական կառավարությունը խոստանում էր Եգիպտոսից դուրս բերել իր զորքերը (բացի այն զորամասերից, որոնք պիտի անցնեին միջինարևելյան հրամանատարության ներքո), եթե Կահիրեն ընդուներ չորս երկրների առաջարկը[45]։ 1951 թ. հոկտեմբերի 14-ին եգիպտական կառավարությունը մերժեց իմպերիալիստական ծրագիրը, իսկ պառլամենտի երկու պալատները միաձայնորեն որոշեցին չեղյալ հայտարարել անգլո-եգիպտական պայմանագիրը։ Մինչև այդ, հոկտեմբերի 9-ին, Արաբական լիգայի քաղաքական կոմիտեն հանդես էր եկել Եգիպտոսի մտադրության պաշտպանությամբ[46]։ Միաժամանակ Լիգայի խորհուրդը որոշել էր արևմտյան երկրների հետ համատեղ չմասնակցել որևէ ռազմական խմբավորման, քանի դեռ չեն բավարարվում արաբական երկրների իրավացի պահանջները։ Իսկ հոկտեմբերի 14-ից հետո Լիգայի անդամ երկրները հանդես եկան Եգիպտոսի պաշտպանությամբ։ Այս պայմաններում Լիգան «քառյակ հայտարարության» կապակցությամբ հատուկ հայտարարությամբ հանդես չեկավ, քանի որ եգիպտական կառավարությունը գտնում էր, որ դրա կարիքը չկա[47]։ Արաբական լիգայի գլխավոր քարտուղար Ազզամը հայտարարեց, որ արաբական երկրների հանդեպ սովետական սպառնալիքի մասին խոսակցությունները ոչ մի հիմք չունեն։ Նա ավելացրեց, որ «Ռուսները երբեք մեզ չեն սպառնացել և չեն ստորացրել» իսկ Եգիպտոսի նկատմամբ «իսկական ագրեսորները անգլիացիներն են»[48]։

Տեսնելով, որ «միջինարևելյան հրամանատարություն» ստեղծելու փորձերը հաջողություն չեն ունենում, արևմտյան երկրները նորից առաջ քաշեցին Թուրքիային Արաբական լիգայի հովանու ներքո կնքված «համատեղ պաշտպանության» պայմանագրի անդամ դարձնելու գաղափարը։ Այսպիսի առաջարկով մտադրություն ուներ հանդես գալ իրաքյան կառավարությունը։ Հատկանշական է նաև, որ ենթադրվում էր «համատեղ պաշտպանության» պայմանագրի անդամությունից միաժամանակ զրկել Եմենին, Սաուդյան Արաբիային, Սիրիային ու Լիբանանին, քանի որ նրանք իբր «ռազմական տեսանկյունից չեն կարող արդյունավետ օգնություն ցուցաբերել»[49]։ Իրականում այս ծրագիրը նպատակամղված էր Եգիպտոսին զրկել Լիգայի շրջանակներում իր մշտական դաշնակիցներից, մեկուսացնել նրան, և համատեղ պաշտպանության պայմանագիրը

դարձնել արևմտամետ ռազմաքաղաքական մի խմբավորման հիմք, որում գլխավորող դեր կկատարեին Թուրքիան, Իրաքը և Անդրհորդանանը։ Այս ծրագիրը, սակայն, այն աստիճան էր հակասում Լիգայի սկզբունքներին, որ վերջիվերջո Իրաքը չհամարձակվեց նույնիսկ այն պաշտոնապես դնել քննարկման։ 1952—1953 թթ. Արաբական Լիգան մի քանի անգամ նորից անդրադարձավ ռազմաքաղաքական խմբավորումներ ստեղծելու հարցին։ ԱՄՆ-ի պետական քարտուղար Դալլեսի Մերձավոր արևելք կատարած այցելության նախօրեին՝ 1953 թ. ապրիլին, Լիբանանի արտաքին գործերի մինիստրությունը Արաբական լիգայի անդամների անունից մի հուշագիր հղեց նրան։ Դրանում նշվում էր, որ Սուեզի ջրանցքից անգլիական զորքերի դուրս բերումից և պաղեստինյան խնդրի լուծումից առաջ արաբական երկրները ավելորդ են համարում որևէ բանակցություն վարել արևմտյան երկրների հետ Մերձավոր արևելքի պաշտպանության վերաբերյալ։ Հուշագրում ասված էր նաև, որ «արաբական երկրները Միջին Արևելքի պաշտպանության համար չեն զգում արևմտյան երկրների կարիքը»[50]։ Այդ շրջանում, մանավանդ 1953 թ., Արաբական լիգայի կողմից մի շարք միջոցառումներ ձեռնարկվեցին համատեղ պաշտպանության պայմանագրի դրույթների արագ և արդյունավետ կենսագործման ուղղությամբ։ Սակայն իմպերիալիստական երկրները շարունակում էին ջանք ու եռանդ չխնայել իրենց նպատակին հասնելու համար։ Մերձավոր և Միջին արևելքում արևմտամետ ռազմաքաղաքական խմբավորման ստեղծումն արագացնելու նպատակով 1954 թ. ապրիլին կնքվեց Թուրք-պակիստանյան համաձայնագիրը «բարեկամության և համագործակցության» վերաբերյալ։ Արաբական երկրներում Թուրք-պակիստանյան համաձայնագիրը և դրան արաբական որոշ երկրների միանալու լուրը բացասական արձագանքներ առաջացրեց։ Նույն օրերին տեղի ունեցող Արաբական լիգայի քաղաքական կոմիտեի նստաշրջանում Լիգայի անդամ երկրները հավաստիացրեցին, որ իրենք հրավեր չեն ստացել միանալու այդ պայմանագրին և «իրենք չեն էլ մտածում դրան միանալու մասին»։ Քաղաքական կոմիտեն նշեց, որ արաբական երկրները ցանկանում են ամրապնդել իրենց պաշտպանությունը։ Դրա համար նրանք կարիք ունեն համապատասխան զենքի։ Բայց ընդգծվեց նաև, որ արաբական երկրները «չեն համաձայնի զենքն ստանալ ի վնաս իրենց երկրների անկախության և սուվերենության, ինչպես նաև համատեղ պաշտպանության պայմանագրի դրույթների խախտման միջոցով...[51]»։ Սակայն, 1954 թ. երկրորդ կեսին

պարզ դարձավ, որ Իրաքը պատրաստ է անդամագրվել իմպերիալիստական ռազմա-քաղաքական խմբավորումում։ 1955 թ. փետրվարին Բաղդադում ստորագրվեց իրաքա-թուրքական ռազմական պայմանագիրը, որը և դարձավ Բաղդադի պակտ անունն ստացած ռազմական ագրեսիվ խմբավորման հիմքը։ 1954 թ. երկրորդ կեսի, 1955 թ. սկզբի իրադարձությունները, այդ թվում նաև Լիգայի դիրքորոշումը դրանց նկատմամբ, բավական մանրամասն լուսաբանված են սովետական հետազոտողների աշխատություններում[52]։ Ուստի միայն նշենք, որ Արաբական լիգայի կողմից ձեռնարկված քայլերը իմպերիալիստական խմբավորումում Իրաքի մասնակցությունը ի չիք դարձնելու ուղղությամբ եղան անարդյունավետ։ Դեռ ավելին, որոշ արաբական երկրների տատանվող կեցվածքը պատճառ դարձավ, որ Արաբական լիգան նույնիսկ չկարողացավ սկզբնական շրջանում պաշտոնապես դատապարտել Իրաքի քայլը։ Սակայն վերջիվերջո Արաբական լիգայի մնացած բոլոր անդամները Արաբական արևելքում օրըստորե հզորացող հակաիմպերիալիստական տրամադրությունների ազդեցության ներքո հստակորեն արտահայտեցին իրենց դեմ լինելը Բաղդադի պակտին։ Բացի Իրաքից որևէ այլ արաբական երկիր այդ խմբավորումում ընդգրկելու արևմտյան երկրների փորձերը ձախողվեցին։

Սակայն ինչն էր պատճառը, որ 10 տարի որևէ խմբավորման մեջ չմտնելուց հետո, Արաբական լիգայի անդամ երկիրը անդամակցեց այդ պակտին։ Բանն այն է, որ եթե 1940-ական թվականների երկրորդ կեսին և 50-ական թթ. սկզբում Մերձավոր արևելքում ռազմա-քաղաքական խմբավորումներ ստեղծելու արևմտյան ծրագրերով նախատեսվում էր դրանցում ընդգրկել Արաբական լիգայի անդամ բոլոր երկրները, ապա 1950-ական թթ. կեսերին, զգալով, որ այդ ծրագրերը անիրագործելի են, իմպերիալիստները որոշեցին սկզբում բավարարվել ծրագրվող խմբավորումում արաբական գլխավոր երկրների մասնակցությամբ։ Ընդ որում առաջնային նշանակություն էր տրվում Իրաքին և Եգիպտոսին։ 1954 թ. հոկտեմբերին կնքվեց անգլո-եգիպտական պայմանագիրը Եգիպտոսից անգլիական զորքերի դուրս բերման մասին, ըստ որի նախատեսվում էր անգլիական զորքերը 20 ամսվա ընթացքում դուրս բերել Սուեզի ջրանցքի գոտուց, սակայն 7 տարվա ընթացքում նրանք իրավունք էին ունենում նորից օգտագործել իրենց խարիսխները, եթե Եգիպտոսի կամ Արաբական լիգայի հովանու ներքո կնքված համատեղ պաշտպանության պայմանագրի անդամ որևէ երկրի, ինչպես

նաև Թուրքիայի դեմ հարձակում կատարվեր*։ Իմպերիալիստական երկրները այս պայմանագիրը համարում էին բավարար միջոց՝ Նեղոսի հովտում իրենց դիրքերն առժամանակ պահպանելու համար։ Անգլո-եգիպտական պայմանագրի ստորագրումից հետո Բաղդադի պակտի հապշտապ ստեղծումով իմպերիալիստները ենթադրում էին ամրապնդել ձեռք բերված հաջողությունը և միաժամանակ բարենպաստ պայմաններ ստեղծել այլ արաբական երկրներ դրանում ներգրավելու համար։ Սակայն այս անգամ ևս արևմտյան երկրների հաշվարկները սխալ դուրս եկան։ Իմպերիալիստներն ստիպված էին բավարարվել արաբական երկրներից միայն Իրաքին այդ ագրեսիվ խմբավորումում ընդգրկելով։ Իսկ 1956 թ. սուեզյան արկածախնդրությունն ու 1958 թ. իրաքյան հեղափոխությունը այդ երկրներում իմպերիալիստական երկրների դիրքերին խորտակիչ հարվածներ հասցրեցին։ Չեղյալ հայտարարվեց անգլո-եգիպտական 1954 թ. պայմանագիրը և Իրաքը դուրս եկավ Բաղդադի պակտից։

Ամփոփելով կարելի է ասել, որ 1940—50-ական թթ. Արաբական լիգան որոշակի դրական դեր կատարեց իմպերիալիստական ռազմաքաղաքական խմբավորումներ ստեղծելու ծրագրերի խափանման գործում։ Իսկ այդ ծրագրերի ձախողումը արաբական ազգային-ազատագրական շարժման կարևոր նվաճումներից է։

Ш. Л. КАРАМАНУКЯН

ПОЗИЦИЯ АРАБСКОЙ ЛИГИ В ОТНОШЕНИИ ИМПЕРИАЛИСТИЧЕСКИХ ПЛАНОВ СОЗДАНИЯ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИХ БЛОКОВ НА БЛИЖНЕМ ВОСТОКЕ

Одной из основных целей политики западных держав в 1940—50-ые годы было создание под их эгидой агрессивных военно-политических блоков на Ближнем и Среднем Востоке, направленных против национально-освободительных сил и стран социализма. Выдвигая в 40-е годы планы подобных блоков, западные державы стремились обеспечить в этом вопросе под-

* Պայմանագրում վերապահություն էր արված, ըստ որի անգլիական զորքերը իրավունք չէին ունենում վերադառնալ, եթե կոնֆլիկտ ծագեր արաբական երկրների կամ նրանց և Իսրայելի միջև[52]։

держку Арабской лиги. Так было в 1945—1946 годах, когда был выдвинут проект «Восточного блока», и в 1948 году, когда Англия выступила с предложением заключить военно-политический союз со странами—членами Арабской лиги в рамках пакта о совместной обороне. Совет Арабской лиги не поддержал эти империалистические инициативы, чем способствовал их провалу.

В 1950-ые годы западные государства стали чаще и более согласованно выступать с предложениями по созданию различного рода блоков. Арабская лига продолжала противодействовать этим планам, в частности, страны—члены лиги в 1951 году отвергли предложение правительств США, Англии, Франции и Турции о создании военно-политического блока под названием «средневосточное командование».

Фактически заключенный еще в 1950 году в рамках Арабской лиги и носящий сугубо арабский характер Договор о совместной обороне был направлен и против этих империалистических программ. Такая последовательность подавляющего большинства членов Арабской лиги вынудила империалистические державы довольствоваться участием только одной арабской страны—Ирака—в созданном в 1955 году «Багдадском пакте».

Можно считать, что в 1940—50 годы Лига внесла определенный вклад в борьбу, направленную против осуществления империалистических программ на Ближнем Востоке.

شاهين قرەمانوكين

موقف جامعة الدول العربية من المشاريع الاستعمارية الرامية لاقامة الاحلاف العسكرية والسياسية في الشرق الادنى

من الاهداف الرئيسية لسياسة الدول الغربية في الشرقين الادنى والاوسط في الاربعينات والخمسينات اقامة ورعاية الاحلاف السياسية والعسكرية العدوانية الموجهة ضد قوى التحرر الوطني والبلدان الاشتراكية. كان اقتراح الدول الغربية لمثل تلك المشاريع في الاربعينات يرمي الى تامين دعم جامعة الدول العربية. هذا ماحدث مثلا سنة ١٩٤٦/٤٥ عندما بدا الترويج لمشروع «الكتلة الشرقية». وفي سنة ١٩٤٧ عندما اقترحت انكلترا عقد اتحاد عسكري وسياسي مع البلدان الاعضاء في جامعة الدول العربية

حول الدفاع المشترك في اطار الحلف المذكور. الا ان رفض مجلس جامعة الدول العربية لتلك المبادرة الاستعمارية ادى الى الفشل الذريع لتلك المشاريع.

وفي الخمسينات باتت الدول الغربية اكثر تعطشا للمزيد من المشاريع الداعية لانشاء مختلف الاحلاف. لكن جامعة الدول العربية استمرت في رفضها وتصديها لتلك المشاريع وبالاخص ذلك الذى اقترحته حكومات الولايات المتحدة الاميركية وانكلترا وفرنسا وتركيا لاقامة الحلف المعروف باسم «منظمة قيادة الشرق الاوسط» (١٩٥٠). وفي الواقع، كان توقيع اتفاقية الدفاع المشترك بين الدول الاعضاء في الجامعة العربية عام ١٩٥٠، والتي حملت طابعا عربيا خالصا، موجهة بدورها ضد امثال تلك المشاريع الاستعمارية. كما ان ثبات اغلبية الدول الاعضاء في الجامعة العربية على مواقفها الضاغطة قد اجبر الدول الامبريالية على القبول في مشاركة ولو دولة عربية واحدة (العراق) في الحلف السياسي العسكرى الذى تم تاسيسه عام ١٩٥٥ والمعروف «بحلف بغداد».

قصارى القول لقد ساهمت جامعة الدول العربية اسهاما محددا في الاربعينات والخمسينات في الكفاح الموجه ضد تحقيق المشاريع الاستعمارية في الشرق الادنى.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Оганесян Н. О.*, Национально-освободительное движение в Ираке, Ереван, 1976; *Пир-Будагова Э. П.*, Сирия в борьбе за упрочение национальной независимости, М., 1978; Политика Англии на Ближнем и Среднем Востоке, М., 1966; *Туганова О. Э.*, Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, М., 19—60; *Федченко А. Ф.*, Ирак в борьбе за независимость, М., 1970; *Հովհաննիսյան Ն. Հ.*, *Ազգային-ազատագրական պայքարը Իրանանում, Երևան, 1967 և այլն։*

2 Cahers de l'orient contemporain. 111, Paris, 1945, էջ 478.

3 *Милоградов П. В.*, Арабский Восток в международных отношениях, М., 1946, էջ 10:

4 *«Արև», Կահիրե, 21—9—1945։*

5 ЦГАОР, ф. 4459, оп. 27/1, д. 5441, л. 24—25.

6 *Луцкий В. Б.*, Лига арабских государств, М., 1946. էջ 23:

7 *Марунов Ю. В., Потемкин Ю. В.*, Арабо-турецкие отношения на современном этапе, М., 1967, էջ 21:

8 Նույն տեղում:

9 *Сейранян Б. Г.*, Египет в борьбе за независимость, М., 1970, էջ 87:

10 نضال الحزب الشيوعي اللبناني من خلال و ثائقه، الجزء الا ول، بيروت، ١٩٧١ ص ١٣٤

11 *Феченко А. Ф.*, Նշվ. աշխ., էջ 116:

12 Նույն տեղում, էջ 116—117:

13 Այս առթիվ անդրհորդանանյան, սիրիական և լիբանանյան գործիչների կատարած հայտարարությունները տե՛ս Khalil M., The Arab States and the Arab League, Beirut, 1962, vol. II, էջ 24—33:

14 Նույն տեղում, էջ 33—34:

15 Նույն տեղում, էջ 34—35:

16 Cahiers de l'orient contemporain, IX—X, Paris, 1947, էջ 52.

17 Նույն տեղում, էջ 53:

18 *Котлов Л. Н.*, Иордания в новейшее время, М., 1967, էջ 80; Политика Англии на Ближнем и Среднем Востоке, էջ 22:

19 *Котлов Л. Н.*, Նշվ. աշխ., էջ 81:

20 Նույն տեղում, էջ 70:

21 Նույն տեղում, էջ 71: *Оганесян Н. О.*, Նշվ. աշխ.. էջ 322 *Лебедев Е. А*, Иордания в борьбе за независимость. М., 1956, էջ 23—24.

22 ЦГАОР, ф. 4459, оп. 27/1, д. 8090, л. 97

23 Նույն տեղում, թ.23—24:

24 Նույն տեղում, թ.97:

25 *Оганесян Н. О.*, Նշվ. աշխ., էջ 321:

26 Политика Франции в Азии и Африке, М., 1965, էջ 97:

27 *Hurewitz J. C.*, Diplomacy in the Near and Middle East, A Documentary Record, vol. II, Princeton, 1956, էջ 309.

28 СССР и арабские страны, 1917—1960, М., 1961, էջ 112:

29 نضال الحزب الشيوعى اللبنانى...، ص١٦٦

30 Արաբական լիգայի պատասխանի տեքստը տե՛ս *Hurewitz J. C.*, Նշվ. աշխ., էջ 310—311.

31 نضال الحزب الشيوعي اللبناني... ص ١٦٦

32 *Сейранян Б. Г.*, Նշվ. աշխ., էջ 168: *Туганова О. Э.*, Նշվ. աշխ., էջ 35:

33 *Марунов Ю. В., Потемкин Ю. В.*, Նշվ. աշխ., էջ 25: *Поцхверия Б. М.*, Внешняя политика Турции после второй мировой войны, М., 1976, էջ 143; *Туганова О. Э.*, Նշվ. աշխ., էջ 31:

34 *Macdonald R.*, The League of Arab States, Princeton, 1865, էջ 227.

35 ЦГАОР, ф. 4459, оп. 27/1, д. 9720, л. 70.

36 Նույն տեղում, թ.297:

37 Նույն տեղում, թ.80,107:

38 Նույն տեղում, թ.334:

39 *Туганова О. Э.*, Նշվ. աշխ., էջ 31:

40 Նույն տեղում։

41 *Марунов Ю. В., Потемкин Ю. В.*, նշվ. աշխ., էջ 24։

42 СССР и арабские страны, էջ 105։

43 Հովհաննիսյան Ն. Հ., նշվ. աշխ., էջ 204։

44 Նույն տեղում, էջ 205—206։

45 *Туганова О. Э.*, նշվ. աշխ., էջ 41; *Сейранян Б. Г.*, նշվ. աշխ., էջ 176։

46 الا هرام، ۹—۱۰—۱۹۵۱

47 ЦГАОР, ф. 4459, оп. 27/1, д. 12493, л. 97

48 Նույն տեղում, գ. 13432, թ. 11։

49 Նույն տեղում, թ.124։

50 Նույն տեղում, թ.331

51 Le journal d'Egypte, 2—4—1954.

52 *Федченко А. Ф.* նշվ. աշխ., էջ 178—180։ *Оганесян Н. О.* նշվ. աշխ., էջ 348—360։ Политика Англии էջ 208—213; *Пир-Будагова Э. П.* նշվ. աշխ., էջ 76—84.

53 Политика Англии..., էջ 80—81.